**ՀՀ գյուղատնտեսության նախարարին կից**
**հասարակական խորհրդի նախագահ**
**պարոն Սերգո Կարապետյանին**

Սաիդ Ավդալյան_-ից
*(դիմողի անուն, ազգանուն)*

Կոտայքի մարզ, գյուղ Զովունի, 1 փողոց, տուն 15, +374-77-66-92-99, saidavdalyan@gmail.com
*(բնակության վայր, հեռախոսի համար, էլ.փոստի հասցե)*

**«Երիտասարդ եզդիներ» հ/կ, 211.171.878964**
*(կազմակերպության լրիվ անվանումը, պետ.գրանցման համարը)*

**ԴԻՄՈՒՄ**

Հարգելի պարոն Կարապետյան,

Խնդրում եմ **«Երիտասարդ եզդիներ» հ/կ-ն** ընդգրկել ՀՀ գյուղատնտեսության նախարարին կից հասարակական խորհրդի կազմում:

Կից ներկայացնում ենք պահանջվող փաստաթղթերը.

1. Կազմակերպության կանոնադրության պետական գրանցման համարի պատճենը
2. Կազմակերպության նախագահի անձնագրի պատճենը
3. Վերջին 2 տարում կազմակերպության ծավալած գործունեության մասին տեղեկանք
4. Հետաքրքրվածության նամակ՝ ԳՆ կից հասարակական խորհրդի մեջ մտնելու համար
5. Հակիրճ վերլուծություն վերջին 3 տարիների ընթացքում ՀՀ Գյուղատնտեսության նախարարության գործունեության և գյուղատնտեսության բնագավառում իրականացվող քաղաքականության վերաբերյալ

Դիմող՝ Սաիդ Ավդալյան (ստորագրություն, անուն, ազգանուն)

< 02 > Մայիս 2016թ.

ՀՀ Գյուղ. Նախ
Վարչատնտեսական վարչություն
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
«02» 05 2016 թ.
Մուտք N Ստ/5107-16

# «Երիտասարդ եզդիներ» հասարակական կազմակերպություն

## Հակիրճ վերլուծություն վերջին 3 տարիների ընթացքում ՀՀ ԳՆ գործունեության և գյուղատնտեսության բնագավառում իրականացվող քաղաքականության վերաբերյալ

Գյուղատնտեսության ոլորտը մշտապես ունեցել է մեծ կարևորություն և նշանակություն Հայաստանի համար: Բնական է, որ վերջին մի քանի տարիներին ՀՀ Գյուղնախարության կողմից պարբերաբար իրականացվում են բարեփոխումներ՝ գյուղատնտեսության ոլորտը զարգացնելու և բարձր հաջողություններ գրացնելու, ոլորտում առկա թերություններն ու խնդիրները վերացնելու ուղղությամբ: Այս առումով կարելի է ընդգծել, որ վերջին 3 տարիներին Գյուղատնտեսության նախարարության գործունեությունը բավականին համապարփակ ու ծավալուն է եղել:

Մասնավորապես, ՀՀ Գյուղատնտեսության նախարարության կողմից բավականաչափ մեծ աշխատանքներ են իրականացվել գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունների թվի ավելացման, հողային ռեսուրսների նպատակային օգտագործման մակարդակի բարձրացման, հացահատիկային տնտեսության զարգացման, կենդանական ծագման մթերքների արտադրությանը նպաստելու ուղղությամբ:

Մեր կարծիքով, Գյուղատնտեսության նախարարության իրականացրած քայլերից կարևոր են նաև արդեն մի քանի տարի պարբերաբար իրականացվող սուբսիդավորված տոկոսադրույքով վարկավորում գյուղատնտեսական արտադրողներին տրամադրելը, այդ թվում նաև պարարտանյութի և դիզելային վառելիքի սուբսիդավորումը: Ինչպես, օրինակ, ազոտական պարարտանյութի ու դիզելային վառելիքի տրամադրում գյուղատնտեսական մթերք արտադրող սուբյեկտներին շուկայականից համապատասխանաբար 25% և 20% ցածր գներով: Գյուղատնտեսության նախարարության կողմից սուբսիդավորվում է նաև գյուղական վայրերում ջրօգտագործողներին տրամադրվող ոռոգման համար նախատեսված ջուրը, որի սուբսիդավորված գինը 11 ՀՀ դրամ է: Սուբսիդավորված թե՛ վարկավորում, թե՛ պարարտանյութ և դիզելային վառելիք, թե՛ ոռոգման ջուր և թե՛ արտոնյալ գնով ջերմատներին գազ տրամադրելը էական և դրական ազդեցություն է թողել գյուղատնտեսության զարգացման վրա: Հարկ ենք համարում նշել, որ պետք է շարունակել սուբսիդավորված տոկոսադրույքներով գյուղատնտեսական վարկեր տրամադրել գյուղերում, հատկապես, երիտասարդների ստեղծած տնտեսությունների կայացման, զարգացման և գյուղատնտեսական գործունեության ծավալման համար:

Գյուղատնտեսության նախարարության կողմից իրականացվող քաղաքականությունը գյուղատնտեսական հումքի մթերման և իրացման ոլորտում

բավականին մեծ հաջողություններ է գրանցել: Հատկապես, կարևոր են գյուղատնտեսական մթերքներ վերամշակող ընկերությունների հետ համաձայնություններ ձեռք բերելը՝ գյուղացիների բերքը իրացնելու ուղղությամբ: Կարևոր են նաև գյուղատնտեսական մթերքների տոնավաճառների կազմակերպումը, որի ընթացքում գյուղացին հնարավորություն է ստանում վաճառելու իր բերքը: Կարծում եմ՝ նմանատիպ տոնավաճառների հաճախականությունը պետք է մեծացնել ոչ միայն Երևանում, այլ նաև այլ խոշոր քաղաքներում:

Գյուղատնտեսության նախարարության կողմից մեծ ուշադրություն է դարձվում գյուղատնտեսական կոոպերատիվ տնտեսությունների ձևավորմանը, որոնք, չնայած իրենց առջև ծառացած խնդիրներին, ինչպիսիք են՝ մեծածախ շուկաների համակարգի դեռևս ոչ ձևավորված լինելը, հողերի կտրտվածությունը և այլն, մեծ թափով զարգանում են և դառնում գյուղատնտեսական քաղաքականության առանցքային ուղղություն: Վերջինիս է ուղղված նաև «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» ՀՀ օրենքը:

Չնայած իրականացվող աշխատանքներին, այնուամենայնիվ, դեռևս կան բազմաթիվ խնդիրներ և թերություններ, որոնք պետք է լուծել, կարգավորել՝ գյուղատնտեսության ոլորտում կայունություն և զարգացում ապահովելու համար: Մասնավորապես, անհրաժեշտ է շարունակել հողային ռեսուրսների նպատակային և արդյունավետ օգտագործումը, ցանքատարածությունների ավելացումը, գյուղատնտեսության ոլորտում նոր տեխնոլոգիաների ներդրումը, հակակարկտային ցանցերի մասայականացումը, գյուղատնտեսական մշակաբույսերի բարձրորակ սերմերի ապահովվածության մակարդակի բարձրացումը, ինչպես նաև գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման համար իրականացվող աշխատանքները և այլն:

«Երիտասարդ եզդիներ» հ/կ-ն պատրաստակամություն է հայտնում մասնակցելու վերոնիշյալ հիմնախնդիրների կարգավորման և հաղթահարման աշխատանքներին:

Կազմված է 10.10.2015թ.

ՀԱՍՏԱՏՎԱԾ է

«ԵՐԻՏԱՍԱՐԴ ԵԶԴԻՆԵՐ»

հասարակական կազմակերպության

հիմնադիր ժողովի որոշմամբ

« 10 » 10 2015թ.

Նախագահ՝ Սաիդ Ավդալյան

ՏՊԱԳՐՎԱԾ է ԵՐԵՔ ՕՐԻՆԱԿԻՑ

ՕՐԻՆԱԿ 3

ԳՐԱՆՑՎԱԾ է

ՀՀ Իրավաբանական անձանց պետական

ռեգիստրի կենտրոնական մարմնի կողմից

«18» 11 2015թ.

Գրանցման N 211.177.872964

Վկայականի N 03ԼԸ 1022964

Հարկ վճարողի հաշվառման համարը՝

03317097

Պետական ռեգիստրի գործակալության

պետ

Կ.ԱԴԱՄՅԱՆ

# «ԵՐԻՏԱՍԱՐԴ ԵԶԴԻՆԵՐ»

# ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Երևան-2015թ.

Իրավաբանական անձի պետական գրանցման

# ՎԿԱՅԱԿԱՆ N 03Ա1028964

Իրավաբանական անձի անվանումը
**«ԵՐԻՏԱՍԱՐԴ ԵԶԴԻՆԵՐ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**

Գրանցված է Պետական ռեգիստրի
**կենտրոնական մարմնի կողմից**

Գրանցման համարը **211.171.878964**
Գրանցման ամսաթիվը **2015-11-18**
Իրավաբանական անձի ծածկագիր(կոդը) **49663861**
Հարկ վճարողի հաշվառման համար **03317097**
Իրավաբանական անձի տեսակը **ոչ առևտրային**
Գործունեության ժամկետը **անժամկետ**

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

(ստորագրություն)

"18" 11 2015 թ.

Վկայականն ուժի մեջ է միայն ներդիրի հետ միասին

Կ.Տ.

# ՆԵՐԴԻՐ 001

Իրավաբանական անձի պետական գրանցման
N 03Ա1028964 վկայականի

Իրավաբանական անձի անվանումը **«ԵՐԻՏԱՍԱՐԴ ԵԶԴԻՆԵՐ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**

Գտնվելու վայրը **1 Փ. / Տ / 15 Գ. ԶՈՎՈՒՆԻ 2406 ՀԱՅԱՍՏԱՆ**

Իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավար,
**Նախագահ՝ ՍԱՀԴ ԱՎԴԱԼՅԱՆ ԶԱՅԻԼԻ**
անձնագիր **AH0699781**, տրվ. **2008-12-02, 046** կողմից,
հասցե **1 Փ. / Տ / 15 ԶՈՎՈՒՆԻ 2406 ԿՈՏԱՅՔ ՀԱՅԱՍՏԱՆ**

Իրավաբանական անձի իրավանախորդի անվանումը և գրանցման համարը —

Այլ տեղեկություններ —

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

(ստորագրություն)

"18" 11 2015 թ.

Կ.Տ.

Ներդիրն ուժի մեջ է միայն վկայականի հետ միասին

# «Երիտասարդ եզդիներ» հասարակական կազմակերպություն

## Տեղեկանք կազմակերպության գործունեության մասին

«Երիտասարդ եզդիներ» հ/կ-ն հիմնադրվել է դեռևս 2011թ. դեկտեմբերի 24-ին[1], սակայն պետական գրանցում ստացել է 2015թ.-ին նոյեմբերի 18-ին: «Երիտասարդ եզդիներ» հ/կ-ն հիմնադրման օրվանից սկսած հետապնդել է եզդիական համայնքի առջև ծառացած խնդիրները բարձրաձայնելու և պետական իշխանության մարմինների, համապատասխան գերատեսչությունների, կազմակերպությունների, շահագրգիռ անձանց հետ համագործակցության պայմաններում այդ խնդիրներին լուծում տալու նպատակ: Ինչպես նաև, «Երիտասարդ եզդիներ» հ/կ-ի նպատակներից են՝ եզդի երիտասարդության համախմբումը՝ ի շահ Հայաստանի և նրա բնակչության, եզդիների իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը, եզդիների շրջանում ազգային արժեքների պահպանումը, դրանց լուսաբանումը հայ և միջազգային հանրությանը և այլն:

«Երիտասարդ եզդիներ» հ/կ-ի կողմից պարբերաբար կազմակերպվում են եզդիների պատմության, կրոնի, մշակույթի վերաբերյալ երկամյա բաց սեմինար-դասընթացներ, որոնց մասնակցում են ինչպես եզդի երիտասարդները, այլ նաև ազգությամբ հայ ուսանողները, դասախոսները, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ և այլն: Նմանատիպ խորացված կարգով սեմինար-դասընթացներ դեռևս 2012թ.-ի մարտից են կազմակերպվում ու գործնական բնույթ ստանում Հայաստանում: Նպատակը մեկն է՝ եզդի, հայ և այլ ազգի ներկայացուցիչներին ներկայացնել, թե ովքեր են եզդիները, ինչ կրոն ունեն, ինչպիսի կրոնական ծեսեր ու ավանդույթներ ունեն, ինչ պատմություն ունեն և այլն:

2012թ.-ին Հայաստանի Արմավիրի մարզի Ակնալիճ համայնքում կառուցվեց առաջին եզդիական սրբատեղին, որի օծումը տեղի ունեցավ նույն տարվա սեպտեմբերի 29-ին: Ընդ որում, այս սրբավայրը Հայաստանում առաջին եզդիական սրբավայրն է, որը հիմքեր ստեղծեց եզդիների ազգային, կրոնական հիմքերը ամրապնդելու համար: Այդ օրվանից «Երիտասարդ եզդիներ» հ/կ-ի կողմից եզդիական սրբատեղիում պարբերաբար կազմակերպվում են միջոցառումներ եզդիների ազգային տոների, կրոնական ծեսերի, ավանդույթների իրականացման համար: Այս տարի նույնպես բազում միջոցառումներ կազմակերպվեցին: «Երիտասարդ եզդիներ» հ/կ-ի կողմից ապրիլի 20-ին կազմակերպվեց եզդիների ազգային տոներից մեկի՝ «Չարշամա սոր»-ի («Կարմիր Չորեքշաբթի») միջոցառումը, դրա նախօրեին՝ ապրիլի 19-ին տոնի նախորդող ճրագալույցի տոնակատարությունը, որին մասնակցելու էին եկել բազմաթիվ եզդիներ ինչպես Հայաստանից, այնպես էլ Գերմանիայից, Ռուսաստանից, Իրաքից և այլն:

---

[1] Տե՛ս, http://heh.am/?module=article&utility=show_article&id_article=272

«Երիտասարդ եզդիներ» հ/կ-ի կողմից կազմակերպվում են հանդիպումներ եզդի ուսանողների, կրթությունը ավարտած անձանց միջև: Այն նպատակ ունի երիտասարդների կողմից ազգային հարցերը բարձրաձայնել, քննարկել և դրա արդյունքում լուծման տարբերակներ գտնել: Այդպիսի հանդիպումները լինում են կանոնավոր՝ ամեն շաբաթվա կիրակի օրը: «Երիտասարդ եզդիներ» հ/կ-ի կողմից կազմակերպվում են նաև հանդիպումներ մի կողմից տեղի եզդիական համայնքի ներկայացուցիչների և մյուս կողմից արտասահմանում բնակվող եզդիական համայնքի հեղինակավոր ներկայացուցիչների միջև:

«Երիտասարդ եզդիներ» հ/կ-ն իր առջև նպատակ է դրել բարձրաձայնելու նաև եզդիների ցեղասպանության մասին և միջազգային հանրության ուշադրությունը հրավիրել այս հիմնախնդրի վրա: Վերջինիս մասին բազմաթիվ միջոցառումներ, հանդիպումներ են կազմակերպվում: Ապրիլ ամսին «Երիտասարդ եզդիներ» հ/կ-ն կազմակերպեց հանդիպում եզդիական համայնքի ներկայացուցիչների և Իսլամական պետության գերությունից փախած իրաքցի եզդի աղջկա միջև, ով մանրամասն ներկայացրեց եզդիների ցեղասպանությունը Իրաքում: «Երիտասարդ եզդիներ» հ/կ-ի կողմից աշխատանքներ են տարվում Օսմանյան կայսրության տարածքում եզդիների ցեղասպանության մասին նյութերի, փաստաթղթերի հավաքագրման համար՝ դրանք Ազգային ժողով ներկայացնելու և եզդիների ցեղասպանությունը դատապարտող օրինագիծ ընդունելու համար: Ինչպես նաև աշխատանքներ են տարվում 2014թ. օգոստոսից սկսված Շանգալի եզդիների ցեղասպանությունը դատապարտող օրինագծերի ընդունման, ցեղասպանությունից մազապուրծ փրկված եզդիներին հումանիտար աղետից փրկելու համար:

«Երիտասարդ եզդիներ» հ/կ-ն իր առջև նպատակ է դրել բարձրաձայնելու Հայաստանի եզդիական համայնքի առջև ծառացած խնդիրների մասին: Եզդիները նույնպես զբաղվում են անասնապահությամբ, հողագործությամբ, այգեգործությամբ և այլն: Հետևաբար, եզդի հողագործը կամ անասնապահը, ապրելով Հայաստանում, ունի բոլոր այն խնդիրները, ինչ այստեղ ապրող հայ հողագործը և անասնապահը: «Երիտասարդ եզդիներ» հ/կ-ի մի շարք ներկայացուցիչներ 2016թ. փետրվար ամսից պարբերաբար այցելում են եզդիաբնակ գյուղեր, շրջում տնից տուն, տեղեկանում շարքային մարդկանց հուզող խնդիրներին, փորձում իրենց հնարավորությունների շրջանակներում օգնել նրանց այդ խնդիրների լուծման նպատակով (խնդիրը համապատասխան գերատեսչության պատասխանատուներին ներկայացնել, լուծման տարբերակներ գտնել նրանց հետ, հետևողական լինել խնդրի լուծման համար իրականացվող աշխատանքներին և այլն):

Եզդիների մեծամասնությունը նույնպես անտեղյակ է իր ազգի պատմությունից ու կրոնից: Այդ անտեղյակությանը նպաստել է եզդիական ազգային դպրոցների և եզդիների վերաբերյալ գիր ու գրականության բացակայությունը: Այդ խնդրի լուծման նպատակով «Երիտասարդ եզդիներ» հ/կ-ն նախաձեռնել է մեկ ամբողջական

աշխատության մեջ եզդիների կրոնի՝ կրոնական աղոթքների և օրհներգերի գրի առնումը և դրա հրատարակումը: Գրքի կազման աշխատանքները արդեն ավարտվել են, և մոտ ապագայում եզդիական համայնքը կունենա այդպիսի մի աշխատություն, որը կթարգմանվի նաև այլ լեզուներով, առաջին հերթին, հայերեն՝ հայ ընթերցողների համար:

«Երիտասարդ եզդիներ» հ/կ-ի կողմից աշխատանքներ են տարվում նաև եզդի երեխաների համար եզդիերեն լեզվի ուսուցման երկարաժամկետ դպրոց բացելու համար:

# «Երիտասարդ եզդիներ» հասարակական կազմակերպություն

Հետաքրքրվածության նամակ ՀՀ Գյուղատնտեսության նախարարին կից հասարակական խորհրդի կազմում ընդգրկվելու համար

Հայաստանի եզդիների մեծամասնությունը հիմնականում կենտրոնացած է Արմավիրի, Արագածոտնի, Արարատի, Կոտայքի մարզերում և զբաղվում են հողագործությամբ, անասնապահությամբ, այգեգործությամբ: Եզդիները, ապրելով Հայաստանում, համարվելով Հայաստանի լիիրավ քաղաքացիներ, ունեն նույն խնդիրներն ու հաջողությունները, առավելություններն ու թերությունները, ինչ Հայաստանում ապրող հայերն ու մյուս ազգերը: Բնական է, որ եզդի հողագործը կունենա նույն խնդիրը (բերքի վաճառքի հետ կապված խնդիր, ոռոգման ջրի խնդիր, կարկտահարություն, պարարտանյութերի և թունաքիմիկատների հետ կապված խնդիրներ և այլն), ինչ հայ հողագործը:

Արդեն բավական ժամանակ է, ինչ «Երիտասարդ եզդիներ» հ/կ-ի ներկայացուցիչները այցելում են եզդիաբնակ գյուղեր, շրջում տնից տուն, տեղում ծանոթանում եզդի գյուղացու առջև ծառացած խնդիրներին: «Երիտասարդ եզդիներ» հ/կ-ն իր հնարավորությունների շրջանակներում աշխատանքներ է տանում օգնելու եզդի գյուղացուն այդ խնդիրների լուծման համար, ինչպես, օրինակ, խնդիրը համապատասխան գերատեսչությունների պատասխանատուների առջև բարձրաձայնել, խնդրի լուծման տարբերակներ գտնել, խնդրի լուծման համար տարվող աշխատանքներին հետևողական լինել և այլն: Երբեմն այսպիսի աշխատանքների իրականացման ժամանակ հանդիպում ենք նաև խնդիրների, ինչպես, օրինակ, հնարավորություն չէր ստեղծվում խնդիրը գերատեսչության գլխավոր պատասխանատուին, տվյալ դեպքում նախարարին ներկայացնել և այդպես էլ խնդիրը մնում էր չլուծված և այլն:

Սակայն կարծում եմ, որ ՀՀ Գյուղատնտեսության նախարարին կից հասարակական խորհրդի կազմում ընդգրկվելու արդյունքում «Երիտասարդ եզդիներ» հ/կ-ն ավելի շատ հնարավորություններ կունենա այդ խնդիրները բարձրաձայնելու համար, և, ամենակարևորը, այդ խնդիրներին անմիջականորեն տեղյակ կլինի նաև Գյուղատնտեսության նախարարը: Կարծում եմ՝ այսպիսի խորհուրդ ստեղծելը անհրաժեշտ ու նպատակահարմար է Հայաստանի գյուղացիների խնդիրների ուսումնասիրման համար, իսկ դրանում եզդիական կազմակերպություն ընդգրկելը խոսում է այն մասին, որ եզդի գյուղացիներին հուզող խնդիրները նույնպես գտնվում են իշխանությունների, գերատեսչությունների աչալուրջ հսկողության և ուշադրության ներքո:

«Երիտասարդ եզդիներ» հ/կ-ն ունի բազմաթիվ անդամներ, ովքեր ապրում են իմ կողմից վերոնիշյալ մարզերում և զբաղվում են գյուղատնտեսական

աշխատանքներով: Նրանց հետ հանդիպումների, խոսակցությունների արդյունքում «Երիտասարդ եզդիներ» հ/կ-ն իրազեկ է դառնում գյուղացու խնդիրներին: Բացի դրանից, Հայաստանի եզդի գյուղացիները շատ անգամներ են դիմել «Երիտասարդ եզդիներ» հ/կ-ին՝ իրենց առջև ծառացած խնդիրները (գյուղատնտեսական ոլորտում) բարձրաձայնելու համար:

«Երիտասարդ եզդիներ» հ/կ-ն պատրաստ է իր փորձով և գիտելիքներով օգնել ՀՀ Գյուղատնտեսության նախարարին կից հասարակական խորհրդին՝ Հայաստանի գյուղացիների առջև ծառացած խնդիրները վերհանելու և դրանք լուծելու համար: